4631

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
Հակոբ Սիմիդյան

«19» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 129 - 25

Նախաձեռնողը՝ ***«Քոնսեկոարդ» ՍՊԸ***
ք. Երևան, Սեբաստիա փ. 31/2

Գործունեությունը՝ ***Պռոշյան բնակավայրում Գ.Չաուշի խճուղի 5 հասցեում Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցում***
Կոտայքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 129 - 25
«19» մայիսի 2025թ.

Պռոշյան բնակավայրում Գ. Չաուշի խճուղի 5 հասցեում Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Քոնսեկոարդ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (այսուհետ՝ ՇՄԱԳ) նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, Նաիրի համայնք, Պռոշյան բնակավայր

Ներածական մաս. «Քոնսեկոարդ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված գնահատման հաշվետվությամբ նախատեսվում է Պռոշյան բնակավայրում Գ.Չաուշի խճուղի 5 հասցեում Երևանի մաքսային և լոգիատիկ կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կառուցում:

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին(այսուհետ՝ ՊԵԿ) սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման N 27072022-07-0124 վկայականով (ծածկագիրը՝ 07-053-0156-0013) ամրագրված հողամասի սահմաններում: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 19.3619 հա:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Պռոշյան բնակավայրի վարչական տարածքում, ծովի մակարդակից 1200 մետր բարձրության վրա: Տարածքն իրենից ներկայացնում է նախկինում կառուցապատված, ազդեցության ենթարկված տարածք: Այն չի առնչվում բնության հատուկ պահպանվող և պատմամշակութային հուշարձանների հետ, տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսերը և կենդանիները: Ռելիեֆը թեք է, տեղ տեղ ձորակներով մասնատված:

Հիդրոերկրաբանական տեսանկյունից տարածքում ստորերկրյա ջրեր գտնվում են 4 մետրից խորը հորիզոններում: Կենտրոնի շենքի հիմքերի կայունության վրա բացասաբար ազդող ֆիզիկաերկրաբանական պրոցեսներ ու երևույթներ տեղամասում չեն դիտվել: Կենտրոնը կառուցվելու է նախկինում պաշտպանության նախարարությանը պատկանող ապամոնտաժված վարչական շենքի տարածքում, որտեղ առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման և էլեկտրամատակարարման գծերը: Կենտրոնի համար անհրաժեշտը միացումներն իրականացվելու են ենթակառուցվածքները տնօրինող կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Կենտրոնի կառուցման տեխնիկան ցուցանիշները հետևյալն են՝

- ՊԵԿ վարչական մասնաշենքի մակերեսը՝ 1950 մ²,
- մուտքի անցման մակերեսը՝ 244 մ²,
- պահակակետերի մակերեսը՝ 164,1 մ²,
- ճաշարանի մակերեսը՝ 713 մ²,
- լաբորատորիաի մակերեսը՝ 648 մ²,
- ԱՏԳ վարչական մասնաշենքի մակերեսը՝ 2002 մ²,
- պահեստի մակերեսը՝ 8697 մ²,
- կաթսայատան մակերեսը՝ 378,8 մ²,
- պոմպակայանի մակերեսը՝ 150 մ²,
- ենթակայանի մակերեսը՝ 150 մ²,
- պոմպակայանի վարչական շենքի մակերեսը՝ 66,6 մ²,
- միջանցիկ կամարի մակերեսը՝ 84,36 մ²,
- կանաչապատման ընդհանուր մակերեսը՝ 52000 մ² (27 %),
- մայթերի և ճեմուղիների մակերեսը՝ 5639 մ²
- ճանապարհային ցանց և ավտոկայանատեղիների մակերես՝ 120666 մ²:

Նախագծով նախատեսվում է կառուցել 15 վերգետնյա և 2 ստորգետնյա հարկից բաղկացած վարչական մասնաշենք, կարգո և հավաքական բեռների զննման, բեռնման և բեռնաթափման մասնաշենք, լաբորատորիա, ԱՏԳ վարչական մաս և սպասարկման սրահ, բեռների կշռման համար 2 տեղ, 4 պահակակետ, ճաշարան և սպասասրահ, կաթսայատուն, պոմպակայան: Բոլոր շինությունները լինելու են առանձին մուտքերով, ասիտիճանավանդակներով և վերելակներով: Նախագծով նախատեսված են նաև առանձին մուտքեր բեռնատարների և մնացած ավտոմեքենաների, այցելուների ավտոկայանատեղի համար: Նախատեսվում են հիմնել այգիներ, ժամանցային գոտիներ, ֆուտբոլի դաշտ: Կենտրոնի վարչական մասնաշենքի 1-ից 10 -րդ հարկերում նախատեսվում են նախասրահ, ընդհունարան, սրճարան, հանգստի գոտի, դահլիճ, սպասասրահ, խոհանոց, տեխնիկական սենյակ, մարզասրահ՝ անձնակազմի համար, ինչպես նաև հանդերձարաններ և լոգասենյակներ: 11-րդ հարկում նախատեսվում է ՊԵԿ նախագահի սենյակը, 50 հոգու համար դահլիճ և 35 հոգու համար նախատեսված աշխատատեղ: 12-րդ հարկից մինչև 15-րդ հարկերում նախատեսվում է 86 հոգու համար աշխատատեղեր: Կենտրոնի ջեռուցումն ու հովացումը իրականացվելու է կենտրոնացված համակարգերի միջոցով: ԱՏԳ վարչական մասը, սպասարկման սրահը և լաբորատորիան երկհարկան են: Պահեստը բաժանված է 4 հատվածից՝ բաց շվաքարան, առանձին սառնարանայի մաս, պահեստ, աշխատանքային 2 հարկ, նախատեսվում է 54 մուտք բեռնակիր մեքենաների համար և միջանցքներ՝ դրանց տեղաշարժման համար

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ բնակչության սակավաշարժ խմբերի համար Կենտրոնն ապահովված է լինելու թեքահարթակներով, սանհանգույցներով և այլն:

Կենտրոնի շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, որոնց տեխնիկական սպասարկումը և լիցքավորումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կետերում: Շինհրապարակում քսայուղեր և վառելանյութեր չեն պահեստավորվելու: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարության համար անհրաժեշտ շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Բնառեսուրսներից ջուրն օգտագործվելու է աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, տրանսպորտային միջոցների անիվների լվացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար կենցաղային նպատակով ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (140 մարդ), ինչը կազմում է 3485 մ³/շին.ժամ: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 2496 մ³/շին.ժամ, անիվների լվացման համար ջրի ծախսը կկազմի 506.9 մ³/շին.ժամ: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 6487.9 մ³/շին.ժամ:

Շինարարության ընթացքում խմելու ջրի օգտագործման նպատակով «Վեոլիա Ջուր» ընկերության հետ կկնքվի պայմանագիր: Անիվների լվացման, ջրցանի, անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքների համար ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել ջրատար մեքենայով, պայմանագրային հիմունքներով: Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է ըստ լցվածության, մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Հողայի ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու նպատակով նախատեսվում է շինարարական հրապարակին կից տեղադրել պլաստիկ տարրա, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և անիվների լվացման ջրերը: Պարզարանի պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում հանվող հողային հանույթից մի մասը կօգտագործվի հետլիցքի համար, իսկ ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի կողմից տրամադրված վայր: Քանի որ տարածքում որոշ հատվածներում առկա հողի բերրի շերտի հզորությունը չի գերազանցում 10 սմ -ը, համաձայն Կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի N 1404-Ն որոշման՝ հողի բերրի շերտի հանում և պահեստավորում նախատեսված չէ :

Շինարարական հրապարակում տեղադրվելու է հրդեհաշիջման վահանակ՝ հակահրդեհային կրակմարիչներով և հիդրատներով:

Բոլոր թափոններն ամբողջությամբ տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Շինարարական թափոնների որոշ մասը կօգտագործվի որպես երկրորդային հումք:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն համաձայն Նաիրիի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի: Կանաչապատ տարածքի ոռոգման նպատակով նախատեսվում է կառուցել ոռոգման համակարգ:

Կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանը կամ ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- կազմակերպել և իրականացվնել փոշու ելակետային և ընթացիկ գործիքային չափումներ՝ շինարարության ընթացքում փոշու մակարդակի արձանագրման նպատակով,

- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ տարվա շոգ և չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մեքենաների սպասարկումն իրականացնել շին. հրապարակից դուրս՝ սպասարկման կետերում,

- շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների վրա,

- աղմկահարույց աշխատանքներն իրականացնել օրվա ցերեկային ժամերին,

- կազմակերպել և իրականացվնել աղմուկի և թրթռման ելակետային և ընթացիկ գործիքային չափումներ՝ աղմուկի և թրթռման մակարդակի արձանագրման նպատակով,

- իրականացվնել կենսաբազմազանության մշտադիտարկումներ,

- շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Կոտայքի մարզի Պռոշյան բնակավայրում մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննական գործընթացը իրականացվել է բնապահպանական ոլորտը կարգավորող օրենսդրական պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ոլորտին առնչվող գերատեսչություններ, Կոտայքի մարզպետարանը, Նաիրի համայնքապետարանը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և շահագործման փուլում՝ կաթսայատան սեզոնային աշխատանքների արդյունքում և կրելու են ժամանակավոր բնույթ: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված մթնոլորտային արտանետումների հաշվարկից երևում է, որ արտանետումները չեն գերազանցելու սահմանային թույլատրելի նորմերը: Շահագործման ընթացքում «Թափոնների մասին» օրենքի և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 9-ի «Թափոնների գոյացման նորմատիվները և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի հաստատման կարգը հաստատելու մասին» N 2291-Ն որոշման պահանջների համապատասխան, փաստացի տվյալների հիման վրա ՊԵԿ-ի կողմից լիազոր մարմնի հաստատմանը կներկայացնի վտանգավոր թափոնների անձնագրերը և թափոնների կառավարումը կիրականացնի համաձայն ձեռք բերված թույլտվության:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Կոտայքի մարզի Պռոշյան բնակավայրում իրականացվել է հանրային 2-րդ լսում, ինչի ընթացքում համայնքն առաջարկել է լոգիստիկ կենտրոնի համար նախատեսել մաքրման կայան, քանի որ բնակավայրի կոյուղու կեղտաջրերի հեռացման ցանցը գտնվում է անմխիթար վիճակում: ՊԵԿ-ի ներկայացուցչի կողմից ընդունվեց առաջարկը, նախագծող ընկերությունը պատրաստակամություն հայտնեց նախագծային լուծումներում հաշվի առնել մաքրման կայանի տեղադրումը և ընտրել այնպիսի մաքրման կայան, որի հզորությունը կապահովի լոգիստիկ կենտրոնի առավելագույն ծանրաբեռնվածության պայմաններում առաջացող կեղտաջրերի ընդունումը և մաքրումը:

Հանրային 2-րդ լսման ընթացքում համայնքի կողմից նախատեսվող գործունեության վերաբերյալ տրվեց դրական կարծիք:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման ընթացքում խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի, ինչպես նաև գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
- Ապահովել կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական և շինարարական նորմերի պահպանման նպատակով:
- Անհրաժեշտ է վերջնական նախագծային աշխատանքներում և շահագործման ընթացքում Կենտրոնն ապահովել կենցաղային կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանով (հանրային 2-րդ լսման ընթացքում համայնքի առաջարկ):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Քոնսեկոարդ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան բնակավայրում Գ. Չաուշի խճուղի 5 հասցեում Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան